



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

516.9

4-29

սեր քոյոյ յերկրի,
միայն ք

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հ. Ա. Մ. ԽՈՐՀՐԴԻ № 16

ՄԱԼԱՐԻԱ

Կազմեց
Բժ. Յե. Կարապետյան

ՅԵՐԵՎԱՆ
1925

8 MAI. 2014

6977

610

114-4Ա

616-9

4-29

ար

ՄԱԼԱՐԻԱ

21 04 AUG 2010
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱԼԱՐԻԱ
7/31 1922
ՄԱԼԱՐԻԱ

1. Ի՞նչ հիվանդությունն է մալարիան, Վո՞ր
չերկրներումն է սարածված յեվ ո՞վ է հի-
վանդանում մալարիայով:

Մալարիան վարակիչ հիվանդություն
է, և տարածված է տաք չերկրներում.
մալարիայով հիվանդանում են թե՛ մե-
ծերը և թե՛ յերեխաները:

2. Հայաստանում Վո՞րեան մարզ է հի-
վանդանում մալարիայով:

Կարելի չէ ասել, վա՞ր հարյուր մար-
դուց հիսուն-վաթսուներ հիվանդ են մա-
լարիայով:

Գրատ. 2000. Տիրուծ. 5000. Պատ. № 2832

Տպագր. Տրեստի 2-րդ Տպարան, Յերեվան

Յ. Ի՞նչպէս ե վարակվում մաշոյր մալարիայով. կարո՞ղ ե վարակվել մարզը մարդուց անմիջապէս, կամ թե ողից, ց՞րէից, ջրից, պսուզից, արեվի ճառագայթներից յեվ ալն:

Վոչ. սրանցից ե վոչ մեկից մարդ չի վարակվում, այլ միայն հատուկ մոծակի կծելուց:

4. Կարո՞ղ ե ամեն մոծակ վարակել մարդուն մալարիայով:

Վոչ. Մոծակի տեսակները շատ են, մոտ հինգհարյուր, բայց մալարիան տարածողը մի վորոշ տեսակի մոծակ ե, վորը կոչվում ե մալարիայի մոծակ, կամ «Անոֆելիս»:

5. Կարո՞ղ ե ամեն մի «Անոֆելիս» մոծակ վարակել մարդուն մալարիայով:

Վոչ. Այն «Անոֆելիս» մոծակն ե վարակում, վորն ինքն ե վարակված.

յեթե մալարիայի վարակը չկա մոծակի մարմնում, նա յերբեր չի կարող վարակել մարդուն:

6. Ի՞նչ բան ե մալարիայի վարակը:

Մալարիայի վարակը շատ վորք կենդանիներ են կամ մանրեներ, վորոնք գիտութեան մեջ կոչվում են «սպլազմոզիներ» ե վորոնց մարդ հասարակ աջքով չի կարող տեսնել. նրանց կարելի յե տեսնել միայն խոշորացնող սպակիներով, այսինքն մանրադիտակով:

7. Վորոք ե կանգնում աչք «սպլազմոզիներ»:

Մարդու արյան ե մոծակի մարմնի մեջ:

8. Ուրեմն ի՞նչպէս ե կասարվում վարակումը:

Յեթե մի տեղ վարակված մոծակ չկա, վարակումը չի կարող տեղի ու-

նենալ. բացի դորանից, յեթե մի տեղ
չկա մալարիայով հիվանդ մարդ, վա-
րակուսմը նույնպես չի կարող կատար-
վել: Ուրեմն՝ մոծակը պետք է կծի մա-
լարիայով հիվանդ մի մարդու, վորի
արյան հետ կանցնեն մոծակի սաա-
մոքսը նաև մալարիայի մանրենները:
Այնուհետև յեթե այդ մոծակը կծի ա-
ռողջ մարդուն, վերջինս անմիջապես
կվարակվի մալարիայով, վորովհետև
կծելու ժամանակ «պլազմոգլիները» մո-
ծակից անցնում են մարդու արյան մեջ:

9. Ենչո՞վ է արբերվում մալարիայի մո-
ծակը հասարակ մոծակից:

Մալարիայի մոծակի թևերը մեծ մա-
սամբ բծավոր են. յերբ նա նստում է
պատի վրա, իր փորիկը բռնում է ուղ-
ղահայաց կերպով զեպի պատը, իսկ
հասարակ մոծակը բռնում է զուգահե-
ռաբար և բարձրացնում է հետևի վոս-

քերը: Յերբ մալարիայի մոծակը նըս-
տած է առաստաղի վրա, թվում է, թե
նա կախված է:

Մալարիայի մոծակը հասարակ մո-
ծակից ավելի մեծ է:

10. Վո՞րտեղ են գտնվում մալարիայի
մոծակները:

Մալարիայի մոծակներն ապրում են
ցածր և ճահճային տեղերում, կանգ-
նած ջրերի, լճերի, լճակների, ջրով
լցված փոսերի մոտ:

Մալարիայի մոծակը լճերից յերկու
վերստից ավելի հեռու չի ապրում:

11. Ենչո՞վ կառելի չե բացատրել, վոր մո-
ծակն ապրում է կանգնած ջրերի մոտ:

Վորովհետև մոծակն իր ձվիկներն
ածում է միայն կանգնած ջրի յերե-
սին: Մալարիայի ամեն մի մոծակ յու-
րաբանչյուր անգամին ածում է մոտ

300 ձվիկ: Ամեն մի ձվիկը 2—4 որվա ընթացքում դառնում է թրթուռ, թրթուռը 8—15 որվա ընթացքում դառնում է հարսնյակ, հարսնյակը 2—4 որվա ընթացքում դառնում է արդեն մոծակ: Ուրեմն ձվիկի մոծակ դառնալը տևում է մոտավորապես 12—24 որ:

Ամեն մի եգ մոծակը ամառվա ընթացքում մի քանի անգամ ձվիկներ է ածում և տալիս է միլլիոնավոր զարգացած մոծակների սերունդ:

12. Յե՞րբ է կծում մալարիայի մոծակը (կծում է եգը):

Նա կծում է տաք յեղանակներին, ալյսինքն՝ գարնանը, ամառը և աշնան սկզբներին. ձմեռը նա հեռանում է ներքնահարկերը, գոմերը, մարագները և նման տեղեր ձմեռելու համար:

13. Ղո՞րճան ժամանակ է անցնում մալարիայի մոծակի կծելուց հետո միջինը մարդու հիվանդանալը:

8—15 որ: Այդ ժամանակի ընթացքում մալարիայի մանրեները մաներով մաշվու աբջան մեջ, սկսում են աճել և զարգանալ, մինչև լոր առաջ բերեն հիվանդության նշանները: Մոծակի կծելուց մինչև հիվանդության նշանները յերևալու ժամանակամիջոցը կաշվում է «գազանի» շրջան: Դա մանրեների բազմանալու շրջանն է:

14. Ե՞ն, հեռանա՞նք ունի մալարիա հիվանդությունը:

Դուր, տաքություն և քրախնը, մալարիայի ամեն մի նստան տևում է 5-ից մինչև 10 ժամ. իսկ սովորաբար 4 ժամ:

15. Արդո՞ւմ այդ բոլոր ճշմաններն անհրաժեշտ են մալարիայի նուպայի ժամանակ:

Վո՞չ: Կարող է լինել միայն տաքութիւն, առանց դողի ու քրտինքի:

16. Վո՞րքան հաճախ են կրկնվում մալարիայով հիվանդների նուպաները:

Ամեն ոք, որ ու մեջ, յերկու որը մի անգամ և խառը:

Ամենաթեթեւ մալարիան ջերմ է ապրիս որ ու մեջ: Այդ տեսակի մալարիան հեշտ է բժշկվում:

Տաք յերկրներում, ինչպես Հնդկաստանում, Թուրքիայում, Պարսկաստանում և այլն, ինչպես նաև մեզ մոտ՝ Հայաստանում, տարածված է նույնպես մի հասուկ տեսակ մալարիա, վորը սաստիկ ծանր ընթացք է ունենում: Հիվանդը ջերմում է անընդհատ, սաստիկ նիհարում է, առաջ է գալիս վերին աստիճանի արյունատակասու-

թիւն և հիվանդն ուժասպառ է լինում: Այս մալարիան կոչվում է տրոպիկական մալարիա: Լինում են դեպքեր յերբ հիվանդը տաքութիւն չի ունենում, բայց զուլը ցավում է, մարմինը կտարատվում է և ճնշված զրութիւն է զգում:

17. Ի՞նչ հետեվանքներ ունի մալարիան:

Յեթե մալարիայով հիվանդը չի բուժվում, նրա հիվանդութիւնը ստանում է տեղական բնույթ: Տեղական բնույթ ունեցող մալարիայով հիվանդները կարող են ստանալ թոքերի բորբոքում և թոքախտ: Նրանց փայծաղը սաստիկ ուռչում է և մեծանում. նրանք ուժասպառ են լինում, նրանց մկանները, սիրտը, լյարդը և մարմնի այլ մասերը թուլանում են: Այգայիսիները կորցնում են տխորժակը, հանգիստ բունը, աշխատանքի ընդունա-

կությունը, մարմնի ուժը: Նրանց հիշողությունը և կամքը թուլանում է: Այս գրությունը կարող է ամիսներ ու տարիներ տևել:

18. Ուրեմն ի՞նչ վնասից են ներկայացնում մալարիան յեվ հրանով վարակվածները:

Շատ մեծ վտանգ, յեթե ի նկատի ունենանք մալարիայի սաստիկ յերկարատևությունը և նրանով վարակվածների հսկայական թիվը: Պետությունը կարող է սաստիկ տուժել, յեթե հիվանդը կանոնավոր կերպով չբժշկվի: Այդ հիվանդը սրեցյալ կը նիհարի և ուժասպառ կը լինի ու չի կարողանա կատարել իր աշխատանքը, վորի հետևանքով նրա անտեսությունը կը բայքայվի և կը հասնի լիակատար անկման:

19. Ուրեմն ի՞նչ անենք, վոր այդ վնասը հեռու լինի մեզանից:

Պայքարել և պայքարել մալարիայի դեմ ու բժշկվել այդ հիվանդությունից:

20. Ի՞նչպես պե՞տ է պայքարել մալարիայի սարսման դեմ:

Մենք ասացինք, վոր մալարիան տարածում են մոծակները և մալարիայով հիվանդ մարդիկ: Ուրեմն մեկ կողմից պետք է բժշկենք հիվանդներին, մյուս կողմից պետք է աշխատենք ամեն կերպ վոչնչացնել մոծակներին:

21. Ի՞նչպես կովել մոծակների դեմ:

Մենք արդեն զիտենք, վոր մոծակը իր բազմացման համար ձվեր է ածում կանգնած շրերի վրա, լճերում և լլճակներում: Այդ ձվիկներից է սող

զայլիս մոծակը: Ուրեմն՝ յեթե մենք
վոչնչացնենք այդ ձվիկները՝ մոծակը
չի կարող բազմանալ: Դա գլխավոր
պայմանն է: Ձվիկները կարելի է վո-
չնչացնել 2 տեսակ, — անպայման մենք
պետք է չորացնենք լճերը, կանգնած
ջրերը: Յեթե կանգնած ջուր չլինի, ձվիկը
չոր տեղում չի կարող ապրել, ուստի
կը վոչնչանաս: Մեր գյուղերում կան
շատ առուներ, վորոնք ձմեռվա ըն-
թացքում կեղտոտվում իրենց մեջ
թափված տերևներից, նրանցում բու-
սած գանազան բույսերից և խոտերից:
Գարնանը յերբ գետերը վարարում են՝
գոյանում են լճակներ և ճահիճներ:
Նմանապես անձրևներից հետո փոս
տեղերում գոյանում են կանգնած լճ-
ակներ: Այդպիսի առուներն ու լճ-
ակները սաստիկ վտանգավոր են մո-
ծակի բազմանալու տեսակետից: Մենք
պետք է հեռացնենք այդ բույսերն ու

խոտերը, առուն պետք է խորացնենք,
նրա ափերն ուղղենք, վորպես զի ջուրն
արագ հոսի և մոծակը չկարողանա
ձվեր ածել:

Յեթե լճերը չորացնելու հնարավո-
րություն չկա՝ պետք է ամեն 10—12
որը մի անգամ նրանց վրա սև նավթ-
մագուլթ լցնենք: Մագուլթը կը ծածկի
ջրի յերեսը և այնտեղ գանված մո-
ծակի թրթուռներն ու հարսնյակները
չեն կարող իրենց պոչիկները դուրս
հանել ջրից ող շնչելու համար. իսկ
յեթե հանեն՝ պոչիկի մեջ գանված շն-
չառության խողովակը կը թաթախվի
մագուլթի մեջ և կը ծածկվի մագու-
լթով, ուստի ողը չի կարող ներս մըա-
նել: Այդ պատճառով և թրթուռը կամ
հարսնյակը կը վոչնչանա: Մոծակների
ձմեռելու ժամանակ պետք է նրանց
կտորել ներքնահարկերում, մարագնե-
րում, գոմերում ծծումբի կամ դար-

մանի ծուխով: Բնակարանները մաս
չպեղեք և Թողնել վարկիցե բայ աման,
սրինակ, ափսե, տաշտ, տակառ, կտա-
րած կուժեր և այլն, վորոնց մեջ կա-
րող են մսմակներ հավաքվել:

22. Ե՞նչ պե՞տ և անի մալաբաշով եի-
վանդը:

Հիվանդն այն ժամանակ կարող է
ազատվել իր հիվանդությունից, յերբ
նա կը դիմի բժշկին: Գյուղացին կամ
բանվորը հետու պետքե պահի իրեն
զանազան պատափական միջոցներից,
անային բժիշկներից, վորոնք իրենց
խավարամտության պատճառով անա-
զին վնաս են տալիս մարդու մարմնին:
Մահվան գեպքեր շատ են լինում այդ-
պիսի պատափական գեղեքից: Կու-
սավորված խորհրդային գյուղացին և
բանվորը պետք է հետու պահի իրեն

խավարից. դա նրա մեծ թշնամին է.
նա պետք է դիմի ամիջապես բժշկի,
վորը գիտականորեն է վերաբերվում
հիվանդությանը, և բժշկում է հիվան-
դին կանոնավոր կերպով: Մալարիան
բժշկելու համար գործ են ածում զըլ-
խավորապես խինին, գյուղերում զրան
ասում են «քինաքինա»:

Թե ինչպես պետք է գործածել խի-
նինը, այդ մասին հարկավոր է դիմել
բժշկի: Խինինը գործ են ածում յերկու
ձեովով:

Առաջին՝ ընդունում են (խմում են)
պարաշոկով կամ ջրի մեջ լուծած, և
յերկրորդ՝ սրսկում են մորթու տակ և
յերակի մեջ: Այս վերջին ձեովով խի-
նինի ազդեցությունն ավելի գորեղ է
լինում:

Շատ հիվանդներ վատ սովորություն
ունեն: Յերբ նրանք տեսնում են, վոր
յերկու, յերեք սրսկումից հետո այլ-

ևս չեն ջերմում, կարծում են թե ար-
դեն առողջացել են և ել չեն գնում
բժշկի մոտ: Դա մեծ սխալ է: Հիվանդն
ախքան ժամանակ պետք է բժշկի մոտ
գնա, վորքան վոր բժիշկն անհրաժեշտ
կը գանի: Հակառակ դեպքում նա մի
քանի որից հետո նորից պետք է
է բժշկի դիմի, վորովհետև ջերմը նո-
րից կսկսի:

Սակայն այս անգամ բժշկությունը
շատ կը գովարանա, վորովհետև ընդ-
միջումը պատճառ կը դառնա, վոր հի-
վանդությունը յերկարի:

23. Կառո՞ղ է մաքր իրեն այնպես պահել,
վոր չհիվանդանա մալարիայով:

Կարող է: Դրա համար պետք է նա
բժշկի խորհրդի համաձայն ընդունի
շաբաթը յերկու անգամ վորքը չափով
խինինի փոշի: Յեթե այնուհետև նրան

մոծակ կծի և վարակի, մալարիայի
մանրեները չեն կարող աճել և բազմա-
նալ, վորովհետև ընդունված խինինը կը
խանգարի մանրեների աճելուն, ուստի
և նրանք կվոջնչանան: Նույնպես կա-
րելի է սլաշտպանվել մալարիայի վա-
րակումից, յեթե լուսամուտները պա-
տենք յերկաթե ցանցով և ծուխ գնենք
սենյակում: Ծուխի շնորհիվ սենյակի
մոծակները կը կոտորվեն, իսկ ցանցը
թույլ չի աա, վոր զբախց նոր մոծակ-
ներ մանեն սենյակը:

Ամեն մի գյուղացի և բանվոր պետք
է լավ իմանա, թե ի՞նչ է մալարիան:
Գյուղերում ուսուցիչները պետք է
օգնեն բժշկին և նրա ասածներն աշխա-
տեն ժողովրդի մեջ տարածել:

Մեր քաղաքներում և գյուղերում բը-
ժիշկները դատախոսում են մալարիայի
մասին: Գյուղացիներն ու բանվորները

պետք է մեծ հետաքրքրութեամբ վերաբերվեն նման դատախոսութեանն ընդին և հաճախեն ավելի գիտակցորեն:

Նրանք պետք է զրգեն ուրիշներին և իրենց հետ բերեն նրանց հիշյալ գատախոսութեանները լսելու: Այդ գատախոսութեանների և զրույցների միջոցով ամեն մի բանվոր և գյուղացի կիմանա աշխատողը, ինչ վեր հարկավոր է մալարիայի գեմ կովելու, կանոնավորապես բժշկվելու և հիվանդութեանից խուսափելու համար:

Մալարիայի գեմ կովելու համար բնակչութեանը ինքը պետք է հայտնաբերի ինքնագործունեութեան և հախածեանութեան: Նա պետք է բժշկիցուցմունքով չորացնի մանր ճահիճները և լճակները, պետք է ամեն միջոց ձեռք առնի, վոր սրանք այլևս չգոյանան: Պետք է մաքուր պահի գետերի և առուների

ափերն ու հունքը, պետք է ծծուծի և գարմանի ծուխ դնելով վոչնչացնի մոծակներին ներքնասաներում, գոմերում և այլ շենքերում:

Բոլոր գավառներում, ուր տարածվում է մալարիան, Առժողկոմը և Առբաժինը ունեն հիվանդանոցներ, վորոնք հատկապես ուսումնասիրում են առք յերկրների հիվանդութեանները և զբաղվում նրանց գեմ պայքարելով ու բժշկելով: Այս հիվանդութեաններից մեկն է մալարիան: Նման հատուկ հիվանդանոցները կոչվում են «Տրոպիկական կայաններ»:

21. Ե՞նչ գեր են խաղում Տրոպիկական կայանները գյուղում:

Մեծ գեր. այդ կայանները պահպանում են գյուղացու և բանվորի առողջութեանը, պաշտպանում են նրանց գա-

նազան հիվանդութիւններից և ուսում-
նասիրում տեղական հիվանդութիւն-
ները:

Տրուպիկական կայանները լուսավո-
րում են գյուղացուն ու բանվորին բրժ-
կասանիտարական տեսակետից, ուսում-
նասիրում են գյուղի կյանքը և պայ-
մանները, չորացնում են ճահիճները,
կոտորում են մոծակներին: Թե գյու-
ղացին, թե բանվորը և թե գյուղի ին-
տելիգենցիան ու հիմնարկութիւնները
պետք է սերտ կապ պահեն կայանի
հետ, փորպեսզի միացյալ ուժերով կա-
րողանան ձեռք-ձեռքի տված պայքարել
մալարիայի դեմ և ազատել գյուղացուն
ու բանվորին նրա փաստկար հետե-
վանքներից:



<< Ազգային գրադարան



NL0273911

6977

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.

610

114-44